



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան  
20 դեկտեմբերի 2021թ.  
ԲԴԽ-101-Ո-Կ-27

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՁԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԱՏԱԿՈՐ ԱՐՇԱԿ ԱԼԱԿԵՐԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՅԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԵԼՈՒ ԶԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝  
ՅԵՏԵՎՅԱԼ ԿԱԾՄՈՎ՝

*նախագահությունը՝*

*Բարձրագույն դատական խորհրդի  
նախագահի պաշտոնակատար*

Գ. Յհանգիրյանի,

*մասնակցությունը՝*

*անդամներ*

- Գ. Բեքմեզյանի,
- Դ. Խաչատրյանի,
- Ս. Մակյանի,
- Լ. Մելիքջանյանի,
- Ս. Միրաջեղյանի,
- Ա. Մխիթարյանի,
- Ս. Ջիչոյանի,
- Վ. Քոչարյանի,

*Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և  
կարգապահական հարցերի հանձնաժողովի  
անդամ*

Դ. Հակոբյանի,

*Վարչական դատարանի դատավոր*

Ա. Ալավերդյանի,

*քարտուղարությունը՝*

Ա. Շիլաջյանի

դռնբաց գիսում, քննության առնելով Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2021 թվականի նոյեմբերի 18-ի N-Կ-14/2021 որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը,

**1.Գործի նախապատմությունը.**

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից 07.07.2021 թվականին Դասավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին (այսուհետ՝ Գանձնաժողով) ներկայացված Վարչական դատարանի (այսուհետ՝ Գատարան) դատավոր Արշակ Ալավերդյանի (այսուհետ՝ Գատավոր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումը:

Հանձնաժողովի 07.09.2021 թվականի N-Կ-14/2021 որոշմամբ Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Հանձնաժողովի 18.11.2021 թվականի N-Կ-14/2021 որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

**2.Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.**

Հանձնաժողովը ներկայացրած միջնորդությամբ հայտնել է, որ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ԳՕՕԳԳ) 2-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի, 114-րդ հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի մինչև 28.05.2021 թվականը գործող խմբագրությամբ 6-րդ մասի, 7-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ ՕՐԵՆԵՔ) 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ողջամիտ ժամկետում գործի բնույթից իրավունքը հանդիսանում է անձի դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ մասը:

Ողջամիտ ժամկետում գործի բնույթից իրավունքը ենթադրում է օպտիմալ հավասարակշռություն դատավարության ընթացքի և դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության միջև:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս նշել է, որ այս երաշխիքի նպասակն է դատական բնույթից բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաբնույթից անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խախտել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ:

Ողջամիտ ժամկետի էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ սալով անորոշությանը, որում զսնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի 18.06.2019 թվականի թիվ ՄԴՈ-1464 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը՝ Հանձնաժողովը նշել է, որ վարչական դատարանը պետք է միջոցներ ձեռնարկի գործը ողջամիտ ժամկետում բնեցելու և լուծելու, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու և այն դատավարության մասնակիցներին հանձնելու

նուդությամբ: Ընդ որում, Օրենսգրքով նախատեսվել է սահմանված ժամկետում, այն է՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակելուց անմիջապես հետո դատավարության մասնակիցներին հանձնելու, իսկ դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայության դեպքում դատական ակտը հրապարակման կամ հաջորդող օրը վերջինիս նուդարկելու դատարանի պարտականությունը:

Միաժամանակ, ցանկացած գործունեությունն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պետք է գերծ մեա դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության, անաշտության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, ինչպես նաև այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը վստահում կամ կասկածի տակ է առնում դատավորի կամ դատարանի անկախությունը և անաշտությունը: Ընդ որում, տեղյակ ժամանակ վճռի օրինակը չուդարկելու արդյունքում՝ խախտվում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքը, քանի որ հետագայում դա անդրադառնում է գործի՝ ընդհանուր առմամբ բոլոր ասյաններում քննության ժամկետի վրա, արդյունքում՝ վճռի հասցեատերերը չեն ստանում ժամանակին հայցվող արդարադատության արդյունքը՝ վերջնական դատական ակտը:

Մույն կարգապահական վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերի համաձայն՝ թիվ ՎԴ6/0206/05/12 վարչական գործով հայցադիմումը Դատարան ներկայացվել է 25.05.2012 թվականին, հայցադիմումն ընդունվել է վարույթ 31.05.2012 թվականին, և գործը քննվել է շուրջ 8 տարի:

Գործի քննության ընթացքում 2012 թվականին կայացել է 1 դատական նիստ, 2013 թվականին՝ 2 դատական նիստ, 2014 թվականին՝ 1, 2015-2018 թվականին կայացել է 3-ական դատական նիստ և 2 դատական նիստ է կայացել 2019 թվականի ընթացքում: Մյուսին, 27.08.2019 թվականին նշանակվել է վճիռ հրապարակելու օր, սակայն գործի քննությունը վերսկսվել է:

07.05.2020 թվականին նշանակվել է վճռի հրապարակման օր, սակայն, առնվազն մինչև Կազմակերպության կողմից հաղորդում ներկայացվելու օրը՝ 07.07.2021 թվականը, վճիռը դատավարության մասնակիցներին չի նուդարկվել: Իսկ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում վճիռը տեղադրվել է 25.09.2021 թվականին: Ընդ որում, գործի քննության ընթացքը չի կասեցվել:

Միաժամանակ թիվ ՎԴ6/0190/05/12 վարչական գործով հայցադիմումը Դատարան ներկայացվել է 15.05.2012 թվականին, այն վարույթ է ընդունվել 22.05.2012 թվականին, և գործը քննվել է մինչև 2020 թվականը:

Գործի քննության ընթացքում 2012 թվականին կայացել է 1 դատական նիստ, 2013 թվականին՝ 2 դատական նիստ, 2014 թվականին՝ 1 դատական նիստ, 2015-2018 թվականների ընթացքում՝ 3-ական դատական նիստ, իսկ 2019 թվականին՝ 2 դատական նիստ: 27.08.2019 թվականին նշանակվել է վճիռ հրապարակելու օր, սակայն գործի քննությունը վերսկսվել: 07.05.2020 թվականին նշանակվել է վճռի հրապարակման օր, սակայն, առնվազն մինչև Կազմակերպության կողմից հաղորդում ներկայացվելու օրը՝ 07.07.2021 թվականը, վճիռը դատավարության մասնակիցներին չի նուդարկվել: Իսկ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում վճիռը

սեղադրվել է 25.09.2021 թվականին: Ընդ որում, գործի թննության ընթացքը չի կասեցվել:

Վերոգրյալի հիման վրա՝ Հանձնաժողովը գտել է, որ Վարչական դատարանի դատավոր Արշակ Վլավերդյանը, միևնույն հայցվորի մասնակցությամբ թիվ ՎԴ6/0206/05/12 և թիվ ՎԴ6/0190/05/12 վարչական գործերը վերևում ներկայացված դատական նիստերի հաճախականությամբ թննելով շուրջ 8 օրի, խախտել է ողջամիտ ժամկետում գործի թննության սկզբունքը, և վճիռները հրապարակելուց հետո, Օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետներում դատավարության մասնակիցներին չհանձնելով, խախտել է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 8-րդ կետերի և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետի պահանջները, քանի որ նշված վարչական գործերը շուրջ 8 օրի թննելով և կայացրած վճիռները հրապարակելուց հետո սեական ժամանակ չուղարկելով դրանք դատավարության մասնակիցներին՝ իր իրավասությանը վերապահված հարցը մինչև հաղորդում ներկայացնելու պահը փաստացի չի լուծել, դրսևորել է դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ, խախտել է գործը ողջամիտ ժամկետում թննելու սկզբունքը, վստահել, կասկածի տակ է առել դատավորի անկախությունը և անաչառությունը, ինչպես նաև վնաս հասցրել արդարադատության շահերին: Ընդ որում՝ վճիռները դատավարության մասնակիցներին չեն հանձնվել սեական ժամանակ, այն է՝ առնվազն 1 օրի 2 մասի (հաշվարկված հաղորդումը ներկայացնելու պահից):

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ վերոնշյալ վարչական գործերի թննության սևողության ողջամտությունը որոշելիս Հանձնաժողովը Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված չափանիշների համատեքստում հաշվի է առել այն հանգամանքը, որ Դատավորը Հանձնաժողովին ներկայացրած բացատրությամբ չի հիմնավորվել, որ նշված գործերի թննության սևողությունը պայմանավորված է եղել գործի հանգամանքներով, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությամբ, վարույթի մասնակիցների վարքագծով:

Ինչպես նաև բացատրությամբ Դատավորը չի հիմնավորել նաև այն հանգամանքը, որ ձեռնարկել է անհրաժեշտ և բավարար դատավարական գործողություններ հնարավոր սեղմ ժամկետում գործի թննությունն ու լուծումն իրականացնելու համար:

Մեղադատական գործի սարիների ընթացքում աշխատանքային ծանրաբեռնվածության վերաբերյալ Դատավորի փաստարկներին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում սեղադրված վիճակագրության սվյալներից, փաստերից ակնհայտ է, որ մեղադրյալի սարիների ընթացքում Դատավորի ծանրաբեռնվածությամբ, հաշվի առնելով վերջինիս վարույթում թննվող և ավարտված վարչական գործերի քանակը, ողջամտորեն չի կարող հիմնավորվել վերոնշյալ վարչական գործերից յուրաքանչյուրի թննության սևողությունը և սեական ժամանակով դատավարության մասնակիցներին վերոնշյալ երկու վարչական գործերով վճիռները չհանձնելու անգործությունը՝ հասկապես հաշվի առնելով հիշյալ

գործերով թույլ սրված կեսանցի ժամանակահատվածն ու բուն գործի ըստ էության բննության սևողությունը:

Ինչ վերաբերում է Դասավորի այն փաստարկին, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ 14.12.2020 թվականի թիվ ԲԴԽ-81-Ո-178 որոշմամբ իր անուն-ազգանունը հանվել է գործերի բաշխման ցանկից՝ 15.12.2020-15.03.2021թթ. ներառյալ, ապա Հանձնաժողովն արձանագրել է, որ հաշվի առնելով թիվ ՎԴԶ/0206/05/12 և թիվ ՎԴԶ/0190/05/12 վարչական գործերի բննության ժամանակահատվածները և այդ գործերով վճիռների հրապարակման ժամանակը, 15.12.2020-15.03.2021թթ. ներառյալ Դասավորի անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից հանելու հանգամանքը սվյալ դեպքում էական նշանակություն ունենալ չի կարող:

Վվելին՝ սույն որոշմամբ արձանագրված խախտումներն նշված ժամանակահատվածում չվերացնելու հանգամանքը Հանձնաժողովը գնահատում է ի վնաս Դասավորի վկայող հանգամանք՝ հաշվի առնելով ԲԴԽ որոշման նպատակները, հիմնականում՝ ազատել առկա ծանրաբեռնվածությունից, այդ թվում՝ վերացնել ժամկետների հետ կապված հնարավոր խախտումները, այնինչ այդ ընթացքում վկայակոչված գործերով վճիռները չեն հրապարակվել և դրանք հրապարակվել են սրված արժանության ժամանակահատվածից՝ 15.03.2021 թվականից վեց ամիս հետո:

Հանձնաժողովն արձանագրել է, որ կարգապահական վարույթի շրջականներում ձեռք բերված նյութերով և դատավորի բացատրությունով հաստատվում է, որ այդ արարքները Դատավորը կատարել է դիտարկության՝ հաշվի առնելով նաև նույն դատավորի վերաբերյալ ԲԴԽ-ի 08.02.2021 թվականի թիվ 1-Ո-Կ-01 որոշմամբ նույնանման հանգամանքների շուրջ արտահայտած իրավական դիրքորոշումները, քանի որ դատավորը լիովին գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ լինելը, ինչը հաստատվում է նաև վերջինիս բացատրություններով:

Մյսափսով, Հանձնաժողովը գտել է, որ Դատավորը թույլ է սվել դատավարական իրավունքի նորմի և Օրենքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնների խախտումներ, որոնք վերջինս կատարել դիտարկության, ուստի Հանձնաժողովի գնահատմամբ առկա են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքեր:

### **3. Դատավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ .**

Սույն կարգապահական վարույթի շրջանակում Դատավորը Հանձնաժողովին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ թիվ ՎԴԶ/0190/05/12 վարչական գործով, ըստ հայցի Կազմակերպության ընդդեմ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության՝ «ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին», հայցադիմումը վարույթ է ընդունվել Դատարանի 22.05.2012 թվականի որոշմամբ:

Օրենսգրքով սահմանված կարգով գործը նախապատրաստվել է դատաբանության, հրավիրվել են նախնական դատական նիստեր, որոնց ընթացքում հայցվորը հայցի հիմքերի փոփոխություններ է ներկայացրել: Նշված գործով հրավիրվել են դատաբանություններ: 16.04.2020 թվականին

հրավիրված դասական նիսուս, Դասարանը, ղեկավարվելով Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասով, ավարտել է գործի դասաքննությունը և հայտարարել է գործն ըստ էության լուծող դասական ակտի հրապարակման վայրն ու ժամանակը, այն է՝ Դասարանի Վանաձորի նսավայրում 07.05.2020 թվականին: Եշված օրը հրավիրված դասական նիսուս հրապարակվել է թիվ ՎԴ6/0190/05/12 վարչական գործով Դասարանի վեճի եզրափակիչ մասը, որով հայցը մերժվել է ամբողջությամբ:

Դասավորը հայցնել է նաև, որ թիվ ՎԴ6/0206/05/12 վարչական գործով, ըստ հայցի՝ Կազմակերպության ընդդեմ Վանաձորի քաղաքապետի «Վանաձորի քաղաքապետի գործողություններն (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին», հայցադիմումը վարույթ է ընդունվել՝ Դասարանի 31.05.2012 թվականի որոշմամբ:

Օրենսգրքով սահմանված կարգով գործը նախապատասխանվել է դասաքննության, հրավիրվել են նախնական դասական նիստեր: Եշված գործով հրավիրվել են դասաքննություններ, 16.04.2020 թվականին հրավիրված դասական նիսուս, ՀՀ վարչական դասարանը, ղեկավարվելով Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասով, ավարտել է գործի դասաքննությունը և հայտարարել է գործն ըստ էության լուծող դասական ակտի հրապարակման վայրն ու ժամանակը, այն է՝ Դասարանի Վանաձորի նսավայրում 07.05.2020 թվականին: Եշված օրը հրավիրված դասական նիսուս հրապարակվել է թիվ ՎԴ6/0206/05/12 վարչական գործով Դասարանի վեճի եզրափակիչ մասը, որով հայցը մերժվել է ամբողջությամբ:

Եշված վարչական գործերով հրավիրված դասական նիստերում հետազոտվել են բազմաթիվ գրավոր ապացույցներ, նյութեր, սեսաների ձևեր, հարցաքննվել են վկաներ:

Դասավորը նշել է, որ վերը նշված երկու վարչական գործերով դասական նիստերը նշանակվել են դասարանի գերհագեցած նիստերի ժամանակացույցին համապատասխան, իսկ դասական ակտերի եզրափակիչ մասերը հրապարակելուց հետո դրանք Օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում դասավարության մասնակիցներին ուղարկվելու անհնարինությունը պայմանավորված է եղել բացառապես աշխատանքային գերծանրաբեռնվածությամբ, որն էլ կապված է եղել այդ ընթացքում նրա նախագահությամբ սեղի ունեցած հարյուրավոր դասական նիստերի, բազմաթիվ դասական ակտերի կայացմամբ, այդ գործերի բարդությամբ:

Միայն 2013 թվականին իրեն են մակագրվել 700-ից ավելի վարչական գործեր:

Դասավորը հայցնել է նաև, որ դիմում է ներկայացրել Բարձրագույն դասական խորհրդին՝ իր վարույթում զսնվող 60 առանձնակի բարդության գործերը ողջամիտ ժամկետում քննելու անհրաժեշտությամբ պայմանավորված Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով իր անուն-ազգանունը ժամանակավորապես գործերի բաշխման ցանկից հանելու խնդրանքով:

Բարձրագույն դասական խորհրդի՝ 14.12.2020 թվականի թիվ ԲԴԽ-81-Ո-178 որոշմամբ իր անուն-ազգանունը հանվել է գործերի բաշխման ցանկից՝ 15.12.2020-15.03.2021թթ. ներառյալ:

Վերը նշված երկու վարչական գործերով արդեն դասավարության մասնակիցներին են ուղարկվել վեճի օրինակները, միաժամանակ Դասավորը

հայցնել է, որ Օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դասարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դասարանն այն բավարարել է:

Եղված վարչական գործերով վերաքննիչ բողոքներ չեն ներկայացվել: Վերը նշված փաստերի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր աշխատանքային գերծանրաբեռնվածության վերաբերյալ մանրամասն վերլուծություն:

Ելնելով վերոգրյալից՝ Դատավորը խնդրել է Հանձնաժողովին համարել, որ իր կողմից թույլ տրված արարքը չի համարվում կարգապահական խախտում, քանի որ այն, թեև ձևականորեն պարունակում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում իր համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությունը չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը, և կարճել իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

Միաժամանակ Բարձրագույն դատական խորհրդին ներկայացրած պատասխանով հայցնել է, որ Հանձնաժողովն իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ՝ դատական իշխանության պաշտոնական կայքում սեղադրված վիճակագրության սվյալների և փաստերի արձանագրմամբ, ակնհայտ է համարել, որ նախորդ տարիների ընթացքում հաշվի առնելով իր ծանրաբեռնվածությամբ իր վարույթում քննված և ավարտված վարչական գործերի քանակը, ողջամտորեն չի կարող հիմնավորվել վերոնշյալ վարչական գործերից յուրաքանչյուրի քննության ճանաչողությունը և ճակատ ժամանակով դատավարության մասնակիցներին վերոնշյալ երկու վարչական գործերով վճիռները չհանձնելու անգործությունը՝ հասկապես հաշվի առնելով հիշյալ գործերով թույլ տրված կետանցի ժամանակահատվածն ու բուն գործի ըստ էության քննության ճանաչողությունը:

Դատավորը նշել է, որ համաձայն չէ Հանձնաժողովի վերոնշյալ դիտարկումներին, քանի որ համապատասխան ժամանակահատվածում, այն է՝ Կազմակերպության հայցադիմումները Դատարանում ստացվելու օրվանից՝ 15.05.2012 թվականից և 25.05.2012 թվականից մինչև սվյալ գործերով Դատարանի կողմից՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը դատավարության մասնակիցներին ուղարկելը՝ 27.09.2021 թվականը, իր ծանրաբեռնվածությունը գնահատելու համար, Հանձնաժողովն առնվազն պետք է մանրամասն ուսումնասիրեր, թե այդ ընթացքում ինքն ինչ ծավալի և ճանաչողությամբ աշխատանքներ է կատարել, մասնավորապես, ինչպե՞ս ժամանակ է ծախսել նոր ներկայացված հայցադիմումների ուսումնասիրության, դրանք վարույթ ընդունելու, վերադարձնելու, ընդունումը մերժելու կամ վերահասցեագրելու և Օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջներով դրանցում առկա ձևական սխալները մասնանշելու, ոչ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելուն, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելուն առաջարկելու և այլ հարցեր պարզելու, կազմված դատական ակտերի նախագծերն ուսումնասիրելու և վերջնական ճեպով ստորագրելու:

վրա, դասական նիստերի անցկացման վրա, միջանկյալ դասական ակտերի կազմման վրա, դասաբնակությունն ավարտված գործերով դասական ակտերի կազմման վրա, դասարանում ստացված տարբեր միջնորդությունների քննարկման և դրանց արդյունքում ընդունված դասական ակտերի կազմման վրա:

Վնհրաժեշտ էր պարզել նաև այդ ամբողջ աշխատանքների բարդությունը և ժամանակասարկությունը: Մինչդեռ Հանձնաժողովը նման ուսումնասիրություն չի կատարել և սվյալ ժամանակահատվածում իր ծանրաբեռնվածությունը զնահատելու վերաբերյալ եկել է սխալ եզրահանգման:

Դասավորը նշել է, որ իր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ 15.05.2012 թվականի դրությամբ իր վարույթում առկա են եղել 609 վարչական գործեր: Տվյալ ժամանակահատվածում վարույթ են ընդունվել ևս 2413 վարչական գործեր, վարույթում առկա գործերի թիվը կազմել է 3022, ներկայացված 348 հայցադիմումների վերաբերյալ որոշումներ են ընդունվել՝ հայցադիմումը վերադարձնելու կամ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, գործը դասաբնակության նախապատասխան և բննելու համար անց են կացվել ավելի, քան 15000 դասական նիստեր, կայացվել են 2642 գործն ըստ էության լուծող դասական ակտեր, առանձին դասական ակտի տեսքով կայացվել են հազարավոր որոշումներ՝ դասավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավելու, դասավարական իրավահաջորդության, ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու, ապացույցներ պահանջելու, հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին միջնորդությունները բավարարելու կամ մերժելու, փորձաբնակությունն նշանակելու և այլ դասավարական հարցեր լուծելու վերաբերյալ, արձակվել են հազարավոր վճարման կարգադրություններ: Եղված ժամանակահատվածում աշխատել է մոտ 1900 աշխատանքային օր:

Դասավորը, ներկայացնելով մեկ աշխատանքային օրվա հաշվարկով միջինը կատարած աշխատանքների քանակը, նշել է, որ միայն աշխատանքային օրերին հնարավոր չէր կատարել վերը նշված ծավալի աշխատանքները, դրանք կատարելու համար, օգտագործել է նաև ոչ աշխատանքային, ներառյալ՝ արձակուրդային օրերը: Դասարանի աշխատակազմը նույնպես աշխատել է ծանրաբեռնված, շատ դեպքերում նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին: Միաժամանակ Դասավորն անդրադարձել է տարբեր գործերի առանձնակի բարդությանն և բննման ժամանակասարկությանը:

Միաժամանակ Դասավորը նշել է, որ Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ հաշվի առնելով նշված երկու վարչական գործերի բննության ժամանակահատվածները և այդ գործերով վճիռների հրապարակման ժամանակը, 15.12.2020-15.03.2021թթ. ներառյալ, Բարձրագույն դասական խորհրդի 14.12.2020 թվականի ԲԽ-81-Ո-178 որոշմամբ իր անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից հանելու հանգամանքը սվյալ դեպքում էական նշանակություն ունենալ չի կարող: Սկզբից, նույն որոշմամբ արձանագրված խախտումները նշված ժամանակահատվածում չվերացնելու հանգամանքը Հանձնաժողովը զնահատել է ի վնաս իրեն վկայող հանգամանք՝ հաշվի առնելով խորհրդի որոշման նպատակները, հիմնականում ազատել առկա ծանրաբեռնվածությունից, այդ թվում՝ վերացնել ժամկետների հետ կապված



հնարավոր խախտումները, այնինչ այդ ընթացքում վկայակոչված գործերով վճիռները չեն հրապարակվել և դրանք հրապարակվել են սրված արտոնության ժամանակահատվածից՝ 15.03.2021 թվականից վեց ամիս հետո:

Դատավորը նշել է, որ համաձայն չէ նաև Հանձնաժողովի վերոնշյալ դիտարկմանը, քանի որ իրականում թիվ ԲԴԽ-81-Ո-178 որոշմամբ իր անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից հանելու արդյունքում, հնարավորություն է ունեցել այդ ընթացքում քննել և ավարտել ավելի շատ վարչական գործեր, ինչի հնարավորությունը չէր ունենա նման որոշման բացակայության դեպքում:

Կազմակերպության կողմից վկայակոչված վերոնշյալ երկու վարչական գործերը նախապատասխանվել են դատաքննության, հրավիրվել են նախնական դատական նիստեր, իսկ դատաքննությամբ հետազոտվել են բազմաթիվ գրավոր ապացույցներ, նյութեր, Տեսերիզներ, հարցաքննվել են վկաներ: Եզված երկու վարչական գործերի քննության Տևողության և կայացված դատական ակտերի սրամատյան ժամանակի ողջամտությունը դիտարկելիս, պետք է հաշվի առնել ոչ միայն այդ գործերի, այլ սվյալ ժամանակահատվածում իր վարույթում քննված մյուս գործերի բարդության և դրանց քննության ժամանակասարության հանգամանքը: Այնուհայե է, որ սվյալ ժամանակահատվածում ողջամիտ ծանրաբեռնվածության պարագայում, նշված երկու վարչական գործերի քննությունն անհամեմատ ավելի կարճ կլսեր:

Վերը նշված վարչական գործերով, դատական նիստերը նշանակվել են դատարանի գերհագեցած նիստերի ժամանակացույցին համապատասխան, իսկ դատական ակտերի եզրափակիչ մասերը հրապարակելուց հետո, դրանք Օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված ժամկետում դատավարության մասնակիցներին ուղարկելու անհնարինությունը պայմանավորված է եղել բացառապես աշխատանքային գերծանրաբեռնվածությամբ: Ավելին, Կազմակերպությունը վերը նշված երկու վարչական գործերով ՀՀ վարչական վերաքննիչ դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոքներ:

Ելնելով վերոգրյալից և վկայակոչելով նույնաման, այն է՝ դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում դատավարության մասնակիցներին չուղարկելու փաստերով, Բարձրագույն դատական խորհրդի 30.05.2019 թվականի թիվ ԲԴԽ-31-Ո-Կ-10 և 10.12.2020 թվականի թիվ ԲԴԽ-Ո-Կ-17 որոշումները՝ Դատավորը խնդրել է համարել, որ իր կողմից թույլ սրված արարքը չի համարվում կարգապահական խախտում, քանի որ այն, թեև ձևականորեն պարունակում է Օրենքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում իր համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությունը չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը, և մերժել՝ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Հանձնաժողովի միջնորդությունը:

**4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.**

1) թիվ ՎԴԿ/0206/05/12 վարչական գործով ըստ հայցի «Հելսինկյան Թադաբացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական

կազմակերպության ընդդեմ Վանաձորի քաղաքապետի՝ Վանաձորի քաղաքապետի գործողություններն (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը Գասարան է ներկայացվել 25.05.2012 թվականին, հայցադիմումն ընդունվել է վարույթ 31.05.2012 թվականին, և գործ քննվել է մինչև 2020 թվականը:

Գործի քննության ընթացքում 2012 թվականին կայացել է 1 դասական նիստ, 2013 թվականին՝ 2 դասական նիստ, 2014 թվականին՝ 1, 2015-2018 թվականներին կայացել է 3-ական դասական նիստ է, և 2 դասական նիստ է կայացել 2019 թվականի ընթացքում:

Սյունուհեսն 27.08.2019 թվականին նշանակվել է վճիռ հրապարակելու օր, սակայն գործի քննությունը վերսկսվել է: 07.05.2020 թվականին նշանակվել է վճռի հրապարակման օր: Սյս ընթացում գործի քննությունը չի կատարվել:

«Դասալեթս» դասական սեղեկասվական ծրագրում կատարվել է նշում, որ հայցը մերժվել է, սակայն վճիռը սեղադրվել է 25.09.2021 թվականին:

2) Թիվ ԿԴԵ/0190/05/12 վարչական գործով ըստ հայցի «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը Գասարան է ներկայացվել 15.05.2012 թվականին, այն վարույթ է ընդունվել 22.05.2012 թվականին, և գործը քննվել է մինչև 2020 թվականը:

Գործի քննության ընթացքում 2012 թվականին կայացել է 1 դասական նիստ, 2013 թվականին՝ 2 դասական նիստ, 2014 թվականին՝ 1 դասական նիստ, 2015-2018 թվականների ընթացքում՝ 3-ական դասական նիստ, իսկ 2019 թվականին՝ 2 դասական նիստ: 27.08.2019 թվականին նշանակվել է վճռի հրապարակման օր, սակայն գործի քննությունը վերսկսվել է: 07.05.2020 թվականին նշանակվել է վճռի հրապարակման օր: Սյս ընթացում գործի քննությունը չի կատարվել:

«Դասալեթս» դասական սեղեկասվական ծրագրում կատարվել է նշում, որ հայցը մերժվել է, սակայն վճիռը սեղադրվել է 25.09.2021 թվականին:

3) Ըստ ՀՀ դասական իշխանության պաշտոնական կայքում սեղադրված վիճակագրության՝ ՀՀ վարչական դատարանի դատավոր Սրջակ Սլավերդյանի գործունեության վերաբերյալ 2015 թվականի հաշվետվության՝ 2014 թվականից 2015 թվականը Դատավորը փոխանցել է 280 գործ, 2015 թվականի ընթացքում ստացել է 254 նոր գործ, 2015 թվականի ընթացքում ավարտել է 186 գործ, որից ըստ էության լուծող՝ 153 գործ: Համաձայն 2016 թվականի հաշվետվության՝ 2015 թվականից 2016 թվականը վերջինս փոխանցել է 348 գործ, 2016 թվականի ընթացքում ստացել է 315 նոր գործ, 2016 թվականի ընթացքում ավարտել է 139 գործ, որից ըստ էության լուծող՝ 107 գործ: 2017 թվականի հաշվետվության՝ 2016 թվականից 2017 թվականը վերջինս փոխանցել է 663 գործ, 2017 թվականի ընթացքում ստացել է 379 նոր գործ, 2017 թվականի ընթացքում ավարտել է 320 գործ, որից ըստ էության լուծող՝ 199 գործ, 2018 թվականի հաշվետվության՝ 2017 թվականից 2018 թվականը վերջինս փոխանցել է 755 գործ, 2018 թվականի ընթացքում ստացել

է 208 նոր գործ, 2018 թվականի ընթացքում ավարտել է 606 գործ, որից ըստ էության լուծող՝ 571 գործ, 2019 թվականի հաշվետվության՝ 2018 թվականից 2019 թվականը վերջինս փոխանցել է 357 գործ, 2019 թվականի ընթացքում ստացել է 199 նոր գործ, այլ դասավորի է փոխանցել 1 գործ, 2019 թվականի ընթացքում ավարտել է 282 գործ, որից ըստ էության լուծող՝ 219 գործ, 2020 թվականի հաշվետվության համաձայն՝ վերջինս 2019 թվականից 2020 թվականը փոխանցել է 274 գործ, 2020 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ստացել է 250 նոր գործ, ավարտել՝ 143 գործ, որից ըստ էության լուծող՝ 96, իսկ 2021 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվության համաձայն՝ վերջինս 2020 թվականից 2021 թվականի 1-ին կիսամյակ փոխանցել է 381 գործ, 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ստացել է 99 նոր գործ, ավարտել՝ 90 գործ, որից ըստ էության լուծող՝ 71 գործ:

**5.Բարձրագույն դասական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով Նախարարի հաղորդումը, ինչպես նաև Նախարարի սեղակալի և ներկայացուցչի բացատրությունները, Դատավորի պատասխանը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը՝ Բարձրագույն դասական խորհուրդը գտնում է, որ Նախարարի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարձագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտարկությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարձագծի ոչ իրավաչափ բնույթը: Իսկ ըստ նույն հոդվածի 5-րդ մասի՝ սույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարձագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև սվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դասական խորհուրդն էական է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

*1. արդյո՞ք Դատավորի կողմից թիվ ՎԴ6/0206/05/12 և թիվ ՎԴ6/0190/05/12 վարչական գործերի բնության ճանդրությունը և դասական ակտերը՝ կողմերին ուղարկելու օրենքով սահմանված ժամկետները խախտելը հանդիսանում են գործերի բնության ողջամիտ ժամկետի խախտում,*

2. արդյո՞ք թիվ ՎԴԵ/0206/05/12 և թիվ ՎԴԵ/0190/05/12 վարչական գործերի ընդունման և դատական ակտերը՝ կողմերին ուղարկելու օրենքով սահմանված ժամկետների խախտումը Դատավորի կողմից կատարվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի իմաստով ղիսավորությամբ:

3. արդյո՞ք թիվ ՎԴԵ/0206/05/12 և թիվ ՎԴԵ/0190/05/12 վարչական գործերով Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները հանգեցրել են դատավորի վարժագծի կանոնի/կանոնների խախտման:

Առաջին հարցի կապակցությամբ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ իր մի շարք որոշումներում (սե՛ս 02.04.2020 թվականի թիվ ԲԴԽ-6-Ո-Կ-3, 05.09.2020 թվականի թիվ ԲԴԽ-9-Ո-Կ-4) Խորհուրդն արդեն իսկ կարևորել է ողջամիտ ժամկետում գործի ընդունման անհրաժեշտությունը՝ այն հաշվառմամբ, որ այդպիսի ժամկետը չպահպանելը կարող է հանգեցնել ոչ միայն արդար դատաբնութային իրավունքի խախտման, այլ նաև մի շարք այլ հիմնարար իրավունքների խախտման:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում ընդունման իրավունք:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում ընդունվելու պահանջն արդար դատաբնութային իրավունքի անկյունաքարերից մեկն է, և դրա խախտումը կարող է խթանել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վսանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունը և կասկածի սակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության» (օրինակ՝ ECHR, Cases of Vazagashvili and Shanava v. Georgia, application no. 50375/07, 18/07/2019, and Lopatin and Medvedskiy v. Ukraine, applications nos. 2278/03 and 6222/03, 20/05/2010), քանի որ գործի ընդունման անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի էլքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը: Ողջամիտ ժամկետում գործի ընդունման իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում (այսուհետև նաև՝ Կոնվենցիա), համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարսկանությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաբնութային իրավունք:

Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ գործի ընդունման ժամկետի ողջամտությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործի համար առանձին՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածով նախանշված ուղեցույցերը, մասնավորապես՝ գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարժագիծը և

վարույթի մասնակցի համար գործի սեական բննության հետևանքները, հնարավոր սեղմ ժամկետում գործի բննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը և գործի բննության ընդհանուր սևողությունը:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրելով, որ դատական պաշտպանության իրավունքը ներառում է նախևառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից ենթադրում է դատարանի պարտականությունը՝ ողջամիտ ժամկետում բննելու գործը և կայացնելու օրինական ու հիմնավորված որոշում, ուսի այս համատեքստում յուրաքանչյուր գործով դատարանները, ելնելով գործի հանգամանքներից, դրա իրավական և փաստական բարդությունից, գնահատելով վարույթի մասնակցի համար գործի սեական բննության հետևանքները, պետք է ձեռնարկեն արդյունավետ և օրինական բոլոր միջոցները՝ հնարավոր սեղմ ժամկետում գործի բննությունն ու լուծումն իրականացնելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալով սույն միջնորդության հիմքերին և հիմնավորումներին՝ Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Քննարկվող պարագայում թիվ ՎԴ6/0206/05/12 վարչական գործով Կազմակերպության կողմից ընդդեմ Վանաձորի քաղաքապետի 25.05.2012 թվականին ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ Դատարանի 31.05.2012 թվականի որոշմամբ, իսկ թիվ ՎԴ6/0190/05/12 վարչական գործով Կազմակերպության կողմից ընդդեմ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության 15.05.2012 թվականին ներկայացված հայցադիմումը վարույթ է ընդունվել Դատարանի 22.05.2012 թվականի որոշմամբ: Եզված գործերի բննության ընթացքում յուրաքանչյուրով նշանակվել են են թվով 10 դատական գիտեր: Միաժամանակ նշված գործերով 07.05.2020 թվականին հրապարակման նշանակված վճիռները Դատական իշխանության պաշտոնական կայքում սեղադրվել են 25.09.2021 թվականին, այն բանից հետո, երբ 07.09.2021թ. Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթը:

Եզված փաստակազմը որևէ կերպ հնարավորություն չի տալիս գործերի բննության շուրջ 8 տարվա ժամկետը գնահատելու որպես ողջամիտ, ինչպես անկանխակալ դիտորդի սեսանկյունից, այնպես էլ դատավարության կողմերի օրինական իրավունքների իրացման, նրանց սպասելիքների, արդարադատության արդյունավետության սեսանկյունից:

Ժամկետների ողջամտությունը չի կարող որոշվել կամայականորեն, դրա որոշման չափանիշները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված ուղեցիղների և այլ ծանրակշիռ գործոնների վրա, սպահովելու համար ակնկալվող արդարադատության արդյունավետությունը: Ուսի նշվածի հաշվառմամբ, Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է բննարկվող գործերի դատավորի կողմից բննության ողջամիտ ժամկետների խախտում:

Հասկապես ընդգծելով դատական ակտերը կողմերին հասանելի լինելու կարևորությունը Բարձրագույն դատական խորհուրդը փաստում է, որ Դատավորի կողմից թիվ ՎԴ6/0206/05/12 և թիվ ՎԴ6/0190/05/12 վարչական գործերով դատական ակտերը կողմերին ակնկալվող ժամկետից շուրջ մեկ տարի չորս ամիս հետո հասանելի դարձնելու պարագայում Դատավորը խախտել է ոչ միայն դատավարական ժամկետները, այլ կողմերի արդար դատաբննության

հիմնարար իրավունքը, գրկել է նրանց ակնկալվող արդարադատության մասին սեղեկանալու և հնարավոր իրավունքների իրացման հնարավորությունից: Բարձրագույն դասական խորհուրդը հիմնավոր չի համարում նաև դասավորի այն պատճառաբանությունը, որ գործերի թնկության ձգձգումները և կողմերին վճիռների հանձնման ուշացումը եղել են Դատավորի գերծանրաբեռնվածության արդյունք:

ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 144-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո գործն ըստ էության լուծող դասական ակտը հանձնվում է դատարանության մասնակիցներին: Դատարանության մասնակիցներից որևէ մեկի ներկա չլինելու դեպքում գործն ըստ էության լուծող դասական ակտի օրինակը հրապարակման կամ դրան հաջորդող օրն ուղարկվում է նրան:

Բարձրագույն դասական խորհուրդը ևս մեկ անգամ ընդգծում է, որ օրենսդրությամբ ամրագրված դատարանական ժամկետներն ինքնապատկառ չեն, դրանք կոչված են երաշխավորելու դատարանական գործընթացներում իրավական որոշակիությունը, ապահովելու անձանց կողմից իրենց իրավունքներից օգտվելու նպատակով հաջորդիվ քայլեր ձեռնարկելու հնարավորությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Դատավորի բացատրությունները, Բարձրագույն դասական խորհուրդը նաև զգնում է, որ Դատավորի կողմից թիվ 476/0206/05/12 և թիվ 476/0190/05/12 վարչական գործերով թույլ է տրվել դասական ակտերի՝ կողմերին ուղարկելու ՀՀ վարչական դատարանության օրենսգրքով նախատեսված ժամկետների խախտում:

Վերոգրյալի հիման վրա Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ Դատավորի կողմից նյութական և դատարանական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են դիտարկությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է դիտարկությամբ կատարված, եթե դատավորը զիջակցել է իր վարժագծի ոչ իրավաչափ բնույթը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն գլխի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի զիջակցել իր վարժագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև սվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Վերոգրյալ իրավանորմի տրամաբանությունից բխում է, որ օրենսդրի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատարանական իրավունքի նորմի խախտման վարժագծի առումով առանձնացվել են մեղքի դրսևորման երկու ձևեր՝ դիտարկություն և կոպիտ անփութություն:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության շեղանկյունից մեղքը դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի նկատմամբ:

Բարձրագույն դասական խորհուրդը զգնում է, որ Դատավորի կողմից թույլ տրված դատարանական իրավունքի նորմի խախտումները կատարվել են «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի իմաստով դիտարկությամբ, քանի որ Դատավորը լիովին զիջակցել է իր վարժագծի ոչ իրավաչափ լինելը, ինչը հաստատվել է նաև

Բարձրագույն դասական խորհրդուն դասավորի կողմից սրված բացատրություններով:

Վերոգրյալի հիման վրա Բարձրագույն դասական խորհուրդը միաժամանակ արձանագրում է, որ Դասավորի կողմից նյութական և դասավարական իրավունքի նորմերի խախտումը, այն է՝ գործերի փնտրության ողջամիս ժամկետի խախտումը և դասական ակտերը կողմերին օրենքով սահմանված ժամկետից ուշ ուղարկելը, հանգեցրել են դասավորի վարձագծի կանոնի խախտման, մասնավորապես դասական իշխանության անկախության և անաշտության վերաբերյալ հանրության վստահության նվազեցման:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ դասավորի նկատմամբ կիրառվող կարգապահական սույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական սույժ կիրառելիս Բարձրագույն դասական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դիտարկությունը կամ կոպիտ անփութությունը, դասավորի անձը, առկա սույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Բարձրագույն դասական խորհուրդը Դասավորի նկատմամբ կարգապահական սույժի սեսակն ընտրելիս հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ Բարձրագույն դասական խորհուրդի 14.12.2020 թվականի թիվ ԲԴԽ-81-Ո-178 որոշմամբ Դասավորի անունը հանվել է դասական գործերի բաշխման համակարգից, ինչը, սակայն, չի օգտագործվել Դասավորի կողմից՝ փնտրվող գործերով վճիռները ժամանակին կողմերին հանձնելու համար: Բարձրագույն դասական խորհուրդը հաշվի է առել նաև Դասավորի անձը բնութագրող հատկանիշները, ինչպես նաև այն հանգամանքը, որ չնայած Դասավորը գիտակցել է, որ խախտել է գործերի փնտրության ողջամիս ժամկետները, սակայն դա արել է գերծանրաբերոնվածության պատճառով, ուշ է տրամադրել դասական ակտերը, սակայն միևնույն ժամանակ վստահ է եղել, որ կողմերը չեն զրկվի բողոքարկման իրենց իրավունքի իրացման հնարավորությունից, քանի որ հնարավոր բողոքարկման իրավունքի իրացումն երաշխավորված է բողոքարկման ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու օրենսդրական հնարավորությամբ և ձևավորված պրակտիկայով: Այնուամենայնիվ Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է, որ դասական ակտի բողոքարկումը չի կարող ինքնապատասկ լինել, և կողմի բողոքարկման իրավունքն երաշխավորված լինելուն հղում անելն այն դեպքում, երբ կողմի համար դասական գործի երկարաժամկետ փնտրությունը հանգեցրել է դրա արդյունքի անօգտակար լինելուն, չի կարող Դասավորի համար մեղմացուցիչ հանգամանք դիտվել:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է նաև, որ կարգապահական պատասխանատվության հարցի փնտրության պահին Դասավորը չի ունեցել կարգապահական սույժ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 149-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դասական խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գասավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը՝ Վարչական դասարանի դասավոր Վրշակ Ալավերդյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, բավարարել: Վարչական դասարանի դասավոր Վրշակ Ալավերդյանին հայտարարել խիստ նկատողություն:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

*ՔԱՐՉԱՐԱՊԵՏ ԴՎՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ*

*ՊՆՇՏՈՆԱԿԱՆՍՈՐ*

*ՎԵՐԱՄԵՆՔՆԵՐ՝*

*Գ. ԶՅՆԱԳԻՐՅԱՆ*

*Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ*

*Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ*

*Մ. ՄԱԿՅԱՆ*

*Լ. ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ*

*Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*Վ. ՄԽԹԱՐՅԱՆ*

*Ս. ՉԻՉՈՅԱՆ*

*Վ. ՔՈՉԱՐՅԱՆ*